

Ի ԹԻՇԱՍՏԻԱ շՈԳԻՈՅ Ի ՏԷՐ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ԻԻՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԵՏ ԹԱՂԱՄԱՆԵՆ / ՊԱՏԿԵՐ
ՏԻ ՄԵՐՈՅ ՅՍԻ ՔՍԻ ԱՅՍՈՒ / ԶԱՐԴԱՐԵԱԼ ՏԱԳԱՂԱԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ Ս [Ր]Բ[Ո]Յ
ԱՄԵՆԱՓՐԿԶԻՆ ՄԱՋՈՒԻ / ՂԱԼԱՐԵՑԻ ՄԱՏԹԵՆՈՍ ԷԼԻՋԱՐԵԱՆՑԻ. 1868 ԱՄԻ Ի 10 ԱՊՐԻԼԻ:

ԲՈՒԴՅՈՆՈՎՍԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

*Բուգյոնոփսկի հայկական հին դերեղմանոցը ոչնչացված է: Նորը 19-րդ դարից է, սակայն
գտնվում է անմխիթար վիճակում: Նկատի ունենալով այն պարագան, որ շուտով այս
դերեղմանոցն էլ է կործանվելու, նպատակահարմար գտանք ընդօրինակելու մի շարք
տապանադրերի նմուշներ՝ հատկապես աղագրական-ընթացիկական նկատառումներով: Ահա
գրանք.*

638. Տապանաքար, վերին մասում՝ 1899, սառը՝ 5 տող.

ԱՍՏ ՀԱՆԳԶԻՆ / ՈՍԿԵՐՔ ԿԵՈՋՆ ԱԿՈՐ ՅՈՎՆԱՆԵՆՑԻ / ԿԱՏԱՐԻ / ՆԷ ԴԱ / ՎԻԳԵԼԱՅՆ:

639. Տապանաքար, վրան ուսական խաչ և 4 տող.

ԱՍՏ ՀԱՆԳԶԻՆ ՈՍԿԵՐՔԻՆ ԿԵՈՋԸ / ՅԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԱՆԵԱՆՑԻ ԱՆՆԱՅ ԳՐԻԳՈՐԵԱՆ / 1894
ԱՄԻ / ՅՈՒՆ. 10:

Մանոթ. Արձանագրութեան վերջին յուճ-ը պեաք է կարգալ Յուճվարի կամ Յուճիսի:

640. Տապանաքար, նույնատիպ, կրաքարից: Վրան՝ 3 տող.

ԱՍՏ ՀԱՆԳԶԻՆ ՈՍԿԵՐՔ / ՍԱՆԴՈՒԽՏԱ՝ ԳԻՆՆ ԽԱԶԱՀՈՐ / ՄԱՐՔԱՐԵԱՆՑ / 1897 ԱՄԻ 20
ՅՈՒԼԻՍԻ:

641. Տապանաքար, վրան՝ 2 տող.

ԱՍՏ ՀԱՆԿԶԻՆ ՈՍԿԵՐՔ ԶԱՔԱՐԱՅ Վ. ԱԼԱՆԵՔԵԱՆՑ / 1894 ԱՄԻ. 15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ:

642. Տապանաքար, վրան՝ 2 տող.

ԱՍՏ ՀԱՆԿԶԻՆ ՈՍԿԵՐՔ ԿՈՍՏԱՆԴԻՆ ԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ / ԲԱՂԴԱՆԵԱՆՑ. ՎԱԽՃ. 1896 Թ.:

643. Տապանաքար, ունի 6 տող.

ԱՍՏ ՀԱՆԿԶԻՆ ՈՍԿԵՐՔ ԿԻՆՆ / ՄԱՆՈՒԿԻ / ԵՂԻՍԱԲԷՏ / ՂԱԼԱԲԵԳԵԱՆՑ. / ՎԱԽ. 1897 ԱՄԻ /
ՅՈԿՏ. 15:

644. Տապանաքար, ունի 8 տող.

ԱՍՏ ՀԱՆԿԶԻՆ ՈՍԿԵՐՔ / ԿԱՐԱՊԵՏ ՅՈՎ / ՅԱՆԵՍԵԱՆ / ԲՈԶԿԱԶԻԱՆՑ. /

ԴԵՌ ԶԻ ԲԱՑՈՒԱԾ ԿՈԿՈՆ ԷՐ, / ԹԱՌԱՄԵՑԱՐ ՎԱՂԱԺԱՄ

ԵՒ ԹՈՂԵՑԻՐ ԽԱՂՋ ՄՈՐԴ ՍԵՒ ՍԳԻ ՄԵՋ ՅԱՐԱԺԱՄ.

ՄՆ. 1891 ԹԻԻ 8ՈՒՆ. 25-Ն. / ՈՂ. 1906 Թ. ՅՈՒՆԻՍԻ 7-Ն:

645. Տապանաքար, ունի 4 տող.

ԱՍՏ ՀԱՆԳԶԻՆ / ՈՍԿԵՐՔ ԿԱՐԱՊԵՏ ՅԱՐՈՒԹԻՒՆ / ԵԱՆ ՂԱՐԻԱՆՑ. / ՈՒ. 1910 ԱՄԻ, ՅՈՒՆ. 5-Ն:

Մանոթ. Երկրորդ տողի առաջին ՈՒ-ն թերևս ուսերեն յՄԵՐ ըառի սկզբնաառն է,
գրված հայերեն:

646. Տապանաքար, վրան 8 տող.

1911 ԹՎԻՆ / ԱՊՐԻԼԻ 1-Ն /: ԱՍՏ ՀԱՆԳԶԻՆ / ՈՍԿԵՐՔ / ԿԱՐԱՊԵՏ ՅՈՎԱՆԵՍԵԱՆ
ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆՑ /:

ԴԵՌ ԶՐԱՑՈՒԱԾ ԿՈԿՈՆ / ԹԱՌԱՄԵՑԱՐ ՎԱՂԱԺԱՄ

ԵՒ ԹՈՂԵՑԻՐ ԽԵՂՋ ՄՈՐԴ ՍԵՒ ՍԳԻ ՄԵՋ ՅԱՐԱԺԱՄ:

647. Տապանափար, վրան՝ 3 առդ.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, ԱՐՁԻՄԱՆԵԱՆ / ԾՆ. 1888 ԱՄԻ / , ՎԱԽՃ. 1907:

648. Տապանափար, վրան՝ 6 առդ.

ԱՍՏ ՀԱՆԿ/ՁԻՆ ՈՍԿԵՐՔ / ԵՂԻԱ / ԳԵՈՐԳԵԱՆ ՍԵՐԵՐԵԱԿ/ԵԱՆՑ / . 1907 ԱՄԻ / 15 ՄԱՐՏԻ:

649. Տապանափար, վրան՝ 2 առդ.

ԱՍՏ ՀԱՆԿՁԻՆ ՈՍԿԵՐՔ ԱՊԿԱՌ ՄՕՎՍԵՍԵԱՆ ՇԱՀԳԵԼԴԵԱՆՑ. / ՎՈԽ. 1905 ԱՄԻ, ՕԳՈՍՏՈՍԻ 26-Գ:

650. Տապանափար, ուղղանկյունածե. Հյուսիսային կողմին՝ 3 առդ.

ԱՍՏ ՀԱՆԳՁԻՆ ՈՍԿԵՐՔ ՀՈՒՇԱՆԱ.

ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ ԶԱՏԱՐԵԱՆՑ.

ԾՆԴ. 1847Թ ՎԱԽՃԱՆ 1903Թ ՀՈԿՑՑԿ:

ԱՍՏ ՀԱՆԳՁԻՆ ՈՍԿԵՐՔ ՇՈՒՇԱՆԱ /
ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ ԶԱՏԱՐԵԱՆՑ / .
/ԾՆԴ. 1847 Թ. ՎԱԽՃԱՆ 1903 Թ.
ՀՈԿՑ. 8-ՄՆ:

Լուսանկ. 181

ՂԶԼԱՐ¹

Թերեքի գետաբերանում գանվող այս քաղաքը հիմնադրվել է 1735 թվականին. ասրիների ընթացքում ընդարձակվել և դարձել է առեարկան կենարոն Հյուսիսային Կովկասի, մասնավորապես Դագսաանի, Կարարզայի և Չեչեն-Ինգուշեթիայի միջև²: Այժմ մանուկ է Դագսաանի Հանրապետության վարչա-տարածքային կազմում: Հայերը Ղղարում բնակություն են հաստատել քաղաքի հիմնադրումից անմիջապես հետո. ղրաղվել են հիմնականում գինեգործությամբ (նաև կոնյակի արաագործությամբ), շերամապահությունով և առևտրով: Մեծ հռչակ է ունեցել աեգիս «Հայկական շուկան»:

1798 թվականի ավյալներով Ղղարում ապրել է 2779 հայ³: Մ. Բժշկյանի շրջագայության ժամանակ հայ ընտանիքների քանակը հասել է 1000-ի⁴, իսկ 1850-ական թթ.՝ 1200-ի: 1861 թ. վիճակագրությամբ Ղղարում բնակվում էին 5613 հայեր⁵, որոնք ունեցել են իրենց ազգային գաաարանը և կրթա-մշակութային օջախները: 19-րդ դարի վերջին քաղաքի աղգարնակչության 2/3-ից ավելին կազմում էին հայերը (թվով 6000 հայ): 1981 թվականին ղղարահայության թիվը շուրջ 4000 էր⁶: Բազմաթիվ հայեր են ապրել Ղղար քաղաքի նաև շրջակա գյուղերում՝ Բեքեթիում (70 առև), Մոլխախլիում (100 առև), Ղարաջալիում (150

1 Անդրադաոնալով Ղղար անվան ստուգաբանությանը՝ Ս. Ջալալյանը նշում է բառի ծագման երկու վարկած. 1. «Վասն արգասաորութեան տեղոյն անուանեալ են Ղղեար, այնէ՝ Ոսկիափն» (Ջալալյան, Բ. էջ 444) և 2. Ըստ ավանդության թաթար հրոսակախմբերը ասպատակություններից մեկի ժամանակ գերեվարում են բազմաթիվ հայ աղջիկների՝ խանին ուղարկելու նպատակով: Սակայն ոչ մի աղջիկ չի համաձայնում մանել խանի հարեմը, և բոլորն էլ նեալելով գեաը՝ խեղդվում են (նույն տեղում):

2 Տե՛ս Ա. Ո. Юхт, Торговля России со странами востока во второй половине XVIII в. и армянское купечество, ИФЖ, 1981, ԼՕ 2, с. 89.

3 ՀՍՀ. Բ. 7, Երևան, 1981, էջ 39:

4 Մ. Բժշկյան, էջ 403-404:

5 Географическо-статистический словарь Российской империи, сост. П. Семнов, т. 2, СПб, 1865, с. 581.

6 Н. Г. Волкова, О расселении армян на Северном Кавказе до начала XX века, ИФЖ, 1966, № 3.